ՊԱՇՏՈՆ	Անհատական բանկային ծառայությունների բաժնի Անհատական մենեջեր
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	13/10/2023
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Անհատական բանկային ծառայությունների բաժնի Անհատական մենեջեր:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաճախորդների հետ համապատասխան պայմանագրերի կնքում, պայմանագրի դադարեցում, փոփոխություն,
- Ավանդային հաշիվների բացում, սպասարկում և դադարեցում, այդ թվում՝ համապատասխան պայմանագրերի բացում, դադարեցում/փոփոխություն, ավանդի համալրում, նվազեցում, երկարաձգում, ժամկետի վերջում հաճախորդի կողմից գումարի ստացման ապահովում, տոկոսագումարների վճարում,
- Վարկային գործընթացի իրականացում, այդ թվում՝ վարկային հայտերի ընդունում, վարկային հայտի ընթացքի ապահովում, վարկի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հավաքագրում, տրամադրման գործընթացի իրականացում, վարկի, վարկային գրաֆիկների տրամադրում, վարկային գործի կազմում, թարմացում, մարումներին հետևում, վարկառուներին հիշեցում, վարկի գումարի կանխիկացում և մարումների իրականացում, վարկի տրամադրման և սպասարկման գործընթացի շրջանակներում Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված միջնորդավճարների և այլ վճարների գանձման իրականացում:
- Վճարային քարտերի դիմումների ընդունում, վճարային քարտերի տրամադրում, բլոկավորում, ապաբլոկավորում, վերաթողարկում, փակում, քարտային հաշվին գումարի մուտքագրում, քարտային հաշվից գումարի կանխիկացում, փոխանցումների իրականացում,
- Անհատական պահատեղերի վարձակալության պայմանագրերի կնքում, դադարեցում, փոփոխում, պահատուփային ծառայության մասով հաճախորդների սպասարկում (հաճախորդի ուղեկցում, և այլն),
- Հաճախորդներին հեռակառավարման համակարգերի տրամադրում, համապատասխան պայմանագրերի կնքում, դադարեցում, փոփոխում,
- Հաճախորդներին իրենց հաշիվների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, վճարային փաստաթղթերի կրկնօրինակների և այլ փաստաթղթերի տրամադրում:
- Պարտատոմսերի վաճառքի իրականացում:
- Պետական մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթների իրականացում:
- Ապահովագրական պայմանագրերի կնքում, հաճախորդներին վկայագրերի տրամադրում
- Հաճախորդներին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ համապատասխան խորհրդատվության/տեղեկատվության տրամադրում:

- Բանկային հաշվի առկայության դեպքում փոխանցումների իրականացում ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս:
- Հաճախորդների հաշիվների վարում, այդ թվում՝ հաշվին կանխիկի մուտքագրում, հաշվի կանխիկ գումարի ելքագրում, փոխանցումների իրականացում ՀՀ տարածքում և/կամ ՀՀ տարածքից դուրս,
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված միջնորդավճարների և այլ վճարների գանձման իրականացում:
- Արտարժույթի կանխիկ և անկանխիկ առք ու վաճառքի իրականացում, արտարժույթի հնամաշ դրամանիշերի փոխանակում:
- Առանց բանկային հաշվի առկայության փոխանցումների իրականացում ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս, Բանկի տարանցիկ հաշվին փոխանցված գումարների տրամադրում հաճախորդներին:
- Արագ դրամական փոխանցումների համակարգերի միջոցով գումարների փոխանցում կամ ստացված գումարների տրամադրում հաճախորդներին:
- Հաճախորդների կողմից ներկայացված վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում և մուտքագրում «Գործառնական օր» ծրագիր:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 1 տարվա աշխատանքային փորձ
- ՀՀ բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքներ – MS Office, LS Bank ծրագրի իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Հայերենի, անգլերենի և ռուսերենի լեզուների գերազանց իմացություն
- Հաղորդակցման և ներկայացման հմտություններ
- Խաչաձև վաճառքի հմտություններ,
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/